Հեղինակ՝ Էլիզա Քեռշկարյան

ԱՐԱՆ ՈՒ ԱՆԻՆ

Մաս 2

Ինչպես Արան ու Անին սովորեցին հագնվել տարվա եղանակներին համապատասխան

Նպատակ

Զարգացնել տարվա եղանակները տարբերակելու և դրանց համապատասխան հագուստ ընտրելու կարողությունը:

Ընթացք

Ողջույն, ես Անին եմ, իսկ սա իմ եղբայրն է՝ Արան: Դու մեզ արդեն ճանաչում ես, չէ՞ որ մենք արդեն ընկերացել ենք:

Այսօր մենք քեզ ցույց կտանք մեր հագուստները և կպատմենք, թե ինչպես ենք սովորել տարվա եղանակներն ու դրանց համապատասխան հագուստ ընտրելը: Ես և Արան ունենք շատ հագուստներ: Երբեմն մենք չենք կողմնորոշվում, թե ինչ հագնել: Չէ՞ որ զգեստապահարանում հագուստներն այնքա՜ն տարբեր են: Այսօր մենք միասին պետք է սովորենք հագնվել՝ հաշվի առնելով տարվա եղանակները, ինչպես նաև գեղեցիկ համադրման շնորհիվ ունենալ հարմարավետ և ոճային տեսք: Կարծում եմ՝ մեզ մոտ կստացվի: Եվ այսպես…… գնացինք:

Սրանք իմ հագուստներն են, իսկ մյուսները՝ Արայինը:

Տարբերակում ենք աղջկա և տղայի համար նախատեսված հագուստները: Դրանք տարբերվում են իրենց ձևով, գույնով, նախշերով և այլն: Արի համեմատենք այդ հագուստները, և դու կտեսնես, թե որքա՞ն տարբեր են դրանք:

Աղջկա զգեստապահարան - անվանի՛ր հագուստները:

Տղայի զգեստապահարան - անվանի՛ր հագուստները:

Արան երբեմն դժվարանում է հագուստ ընտրելիս. այդ հարցում ես միշտ նրան օգնության եմ հասնում:

Ճիշտ է, նա երբեմն փնթփնթում է՝ «Ա՛խ այս աղջիկները, որքա՛ն թիթիզ են, սիրում են շրջազգեստներ հագնել և այնքան պտտվել, որ գլխապտույտ են առաջացնում»: Բայց ինչ արած, մենք այդպիսին ենք, ախր շա՜տ թիթիզն ենք, չէ՞:

Հարկ է հաշվի առնել, որ հագուստները պետք է կրել մաքուր վիճակում: Մայրիկը հոգ է տանում այդ ամենի մասին և մշտապես հագուստները մեզ տրամադրում է արդեն պատրաստ վիճակում:

Մեր սենյակը շատ հարմարավետ է և կոկիկ: Ես և եղբայրս սիրում ենք կարգ ու կանոն: Բացի այդ, մայրիկին էլ է շատ դուր գալիս, երբ մենք կոկիկ ենք (Տե՛ս «Լվացքի մեքենա-պահարան» խաղը):

Մեզ համար իսկական տոն է, երբ մայրիկի հետ գնում ենք հագուստներ գնելու: Ես ու Արան շատ ենք սիրում գնումներ կատարել և ուրախությամբ ենք նոր հագուստներ ընտրում:



Երբեմն, երբ մենք չենք կողմնորոշվում՝ ինչ գնել, որն է ավելի սիրուն, կամ որ զգեստի հետ այն կարող ենք համադրել:

Այդ հարցում մեզ օգնության են գալիս մեր ընկերները:

Մեր հագուստները շատ բազմազան են. երկարաթև ու կարճաթև շապիկներ, վերնաշապիկներ, շրջազգեստներ, կիսաշրջազգեստներ, տաբատներ, գլխարկներ, բաճկոններ, վերարկուներ, ձեռնոցներ և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խմբավորել դրանք ըստ տարվա եղանակների և կրելիս հաշվի առնել եղանակային պայմանները:

Նայի՛ր նկարին, հագուստի ի՞նչ տեսակներ ես տեսնում, անվանի՛ր դրանք:

Այժմ սովորենք, թե տարին քանի եղանակ ունի:

Եվ այսպես, տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ:



Նայիր ծառին և իսկույն կնկատես տարվա եղանակների հերթափոխման հետևանքով բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները:

Որքա՞ն ինքնատիպ և յուրահատուկ է դրանցից յուրաքանչյուրը:

Արի նկարագրենք դրանք և տեսնենք, թե բնության մեջ ինչ երևույթներ են տեղի ունենում այդ չորս եղանակների ընթացքում:

Եթե արդեն տարբերակեցիր դրանք, նայիր նկարներին և ընտրիր տարվա եղանակը:







Յուրաքանչյուր նկարի ներքևում կտեսնես այս պատկերները, որոնք ունեն հետևյալ նշանակությունը՝

- գարուն, - ամառ, -աշուն, - ձմեռ:



Այդ եղանակներից ամեն մեկն ունի իր յուրահատկությունները: Մենք պետք է հաշվի առնենք տարվա եղանակները և հագուստներն ընտրենք դրանց համապատասխան:

Նայիր նկարներին. ի՞նչ ես տեսնում: Ասա, թե որ նկարում որ եղանակն է:

Այժմ արի նկարագրենք յուրաքանչյուր եղանակը և ընտրենք դրանց համապատասխան հագուստներ: Սկսենք զարթոնքով. տարվա ամենագեղեցիկ եղանակը **գարունն է**:

Գարնանը ծառերը բողբոջում են, ծաղկում: Օրերը երկարում են: Ամենուրեք սկսում է կանաչել, բնությունը զարթոնք է ապրում: Նայիր քարտին, ի՞նչ կասես:

Երկարաշունչ ձմռանից հետո մարդիկ հանում են իրենց հաստ ու տաք հագուստները և մի քիչ թեթևանում: Իհարկե շատ չէ, քանի որ գարնանն էլ երբեմն ցուրտ է լինում, պետք է հաշվի առնել եղանակը:

Գարնան ամիսներն են՝ **մարտ, ապրիլ, մայիս**: Հարկ է նշել, որ այդ ամիսների ընթացքում էլ լինում են շատ փոփոխություններ: Օրինակ՝ գարնան առաջին օրերին՝ մարտ ամսին, եղանակը ավելի ցուրտ է, քան մայիսին: Հագուստ ընտրելիս պետք է սա հաշվի առնել:



Ահա գարնանային հագուստի տեսակներ: Այս բոլորը կարող ես կրել գարնանը, անվանիր դրանք և տեղադրիր գարնան քարտի վրա:

Գարնանը կրում ենք երկարաթև վերնաշապիկներ, վերնազգեստներ, վրայից հագնում բաճկոն, այնուհետև, երբ եղանակը քիչ-քիչ տաքանում է, սկսում ենք ավելի թեթև հագնվել:

Գարունն առատ է տեղումներով, դրա համար անհրաժեշտ է ունենալ անձրևանոց:

Գարնանը ծաղկում են ծաղիկները և իրենց անուշ բուրմունքը տարածում ամենուրեք: Ես շատ եմ սիրում ծաղիկներ:

Մայրիկը տանը սենյակային բույսեր ունի: Մենք երբեմն նրան օգնում ենք խնամել դրանք:

Հարկ է նշել, որ գարնանը տոնում ենք Մայրերի տոնը. այն հիանալի հնարավորություն է ծաղիկներ նվիրելու համար: Մայրիկը դրանից շատ է ուրախանում:

Երբ ավարտվում է գարունը, սկսվում է տարվա ամենաշոգ եղանակը՝ բոլորի կողմից շատ սիրելի ու սպասված **ամառը**: Ամռանն արևն ավելի շատ է ջերմացնում, հասունանում են մրգերը: Նայիր քարտին, ի՞նչ ես նկատում:

Ամռան ամիսներն են **հունիսը, հուլիսը և օգոստոսը**: Ամռան առաջին օրը՝ **հունիսի 1-ին**, մենք նշում ենք Երեխաների պաշտպանության օրը, կազմակերպում բազում միջոցառումներ, երգում, պարում, ուրախանում: Ամռանը շատ շոգ է լինում, և մենք կրում

ենք շատ թեթև հագուստ՝ կարճաթև շապիկներ, շրջազգեստներ, կիսաշրջազգեստներ, կիսատաբատ և այլն:

Ահա ամառային հագուստի տեսակները: Անվանի՛ր դրանք և տեղադրիր ամռան քարտի վրա:

Այս բոլորը ամառային հագուստներ են: Պետք չէ մոռանալ նաև աքսեսուարների մասին՝ գլխարկ, ակնոց: Դրանք անհրաժեշտ են արևից պաշտպանվելու համար:

Ամռան օրերին շատ ենք օգտագործում ջուր, քանի որ շատ շոգ է լինում:

Ամռանը զովանալու հրաշալի տարբերակ է նաև լողալը:

Ես ու Արան շատ ենք սիրում Վարդավառը և անհամբեր սպասում ենք, թե երբ է գալու այդ օրը, որ մի լավ ջրենք իրար:

Ամառը առանձնահատուկ է նաև նրանով, որ մենք շատ ենք իջնում բակ: Այն ամենահարմար եղանակն է ընկերների հետ լավ ժամանակ անցկացնելու համար: Մենք միասին խաղում ենք և զվարճանում:

Ամռան շոգ օրերից հետո մեզ հյուր է գալիս մի հրաշալի եղանակ՝ **աշունը**, և բնությունը տարբեր գույներ է հագնում:

Աշնան ամիսներն են **սեպտեմբերը, հոկտեմբերը և նոյեմբերը:** Աշնան առաջին օրը **սեպտեմբերի 1-ն** է: Այդ օրը դպրոցներն իրենց դռներն են բացում հարյուրավոր երեխաների առջև, սկսում է ուսումնական տարին: Եղանակը աստիճանաբար ավելի զով է դառնում:

Այս հագուստները կարող ես կրել աշնանը: Պետք է հիշես նաև անձրևանոցի մասին, չէ՞ որ աշնանը անձրևներ շատ են գալիս: Այժմ կարող ես հագուստի այս տեսակները տեղադրել աշնան քարտի վրա:

Աշնանը տաքն ավելի դուրեկան է դառնում, մենք կրում ենք երկարաթև հագուստ, վրայից էլ հագնում վերնազգեստ կամ բաճկոն:

Տերևները գույնզգույն են դառնում, նաև հասած մրգերը հավաքելու ժամանակն է: Իսկ խոր աշնանը ցուրտ է, հաճախ անձրևներ են տեղում, և տերևաթափ է լինում:

Ես ու Անին սիրում ենք զբոսնել և ոտքերի տակ լսել չորացած տերևների խշխշոցը:

Աշնանից հետո գալիս է տարվա ամենացուրտ եղանակը՝ ձմեռը: Ձմռանը օրերը կարճանում են, ձյուն է գալիս: Ձմռանը մենք նշում ենք մեր ամենասիրելի տոները՝ Նոր տարին և Սուրբ Ծնունդը: Բոլորն անհամբեր սպասում են այդ տոնին, զարդարում բնակարանն ու եղևնին, նոր երազանքներ պահում և համոզված են, որ դրանք անպայման կիրականանան:

Ձմռան ամիսներն են **դեկտեմբերը, հունվարը, փետրվարը:** Ձմռանը պետք է տաք հագնվել, այլապես կհիվանդանանք:

Սրանք ձմռան համար նախատեսված հագուստներն են: Այժմ կարող ես դրանք տեղադրել քարտի վրա:

Ձմռանը, ինչպես արդեն տեսնում ես, կրում ենք հաստ հագուստներ՝ վերնազգեստներ, վերարկու, տաք գուլպաներ, ճտքակոշիկներ: Պետք է հիշել նաև գլխարկի և ձեռնոցների մասին, որոնք մեզ պաշտպանում են սաստիկ ցրտից:

Ես ու Անին շատ ենք ուրախանում, երբ ձյուն է գալիս: Իջնում ենք բակ, որտեղ ամեն ինչ ծածկված է սպիտակ ու մաքուր սավանով, միասին ձնագնդի ենք խաղում, ձնեմարդ պատրաստում: Ինչևէ, այս ամենը շատ զվարճալի է:

Ուզում եմ քեզ պատմել, թե ինչ եղավ, երբ մենք շատ մնացինք դրսում:

Մենք սաստիկ մրսել էինք և հիվանդացանք:

Մեզ օգնության հասավ մայրիկը. չէ՞ որ նա շատ հոգատար է մեր նկատմամբ: Նա մեզ մի քանի օր անընդհատ տաք թեյ էր տալիս: Կատարելով բժշկի խորհուրդները, օգտագործելով տաք թեյեր՝ մենք շուտ առողջացանք: Այնպես որ հիշիր, որ զվարճանքն էլ պետք է չափավոր լինի. եթե մենք այդքան երկար ժամանակ չմնայինք դրսում, չէինք հիվանդանա: Պետք է մտածել նաև հետևանքների մասին:

Կարճ ժամանակ անց մենք առողջացանք: Ի՞նչ լավ է, երբ առույգ ես լինում:

Առջևում բոլորիս կողմից շատ սպասված տոնն է՝ Ամանորը: Ես ու Արան անհամբեր սպասում ենք այդ տոնին և սկսում պատրաստվել: Մենք խաղալիքներով զարդարում ենք տոնածառը, հագնում տոնական հագուստներ և անհամբեր սպասում նվերներին: Մենք նաև նոր նպատակներ ենք դնում մեր առջև, որ եկող տարվա ընթացքում անպայման իրագործենք դրանք:

Դու ինչպե՞ս ես անցկացնում Ամանորը, պատմիր այդ մասին:

Տարին մոտեցավ ավարտին, բայց հետո ամեն ինչ նորից է սկսվելու:

Հարկ է նշել, որ տարին սկսվում է ձմռանը՝ հունվար ամսին, և ավարտվում դեկտեմբերին:

Մայրիկն ասում է, որ տարին ունի 12 ամիս, այսինքն՝ յուրաքանչյուր եղանակ մեզ հյուր է գալիս 3 ամսով:

Կարծում եմ՝ կռահեցիր, որ տարվա եղանակների և հագուստների քարտերի միջև կար օրինաչափություն: Գարնան քարտերը կանաչ էին, ամռանը՝ կարմիր, աշնանը՝ նարնջագույն, իսկ ձմռանը՝ կապույտ: Երբ բոլոր քարտերը քո առջև լինեն, սա կլինի քեզ համար փոքրիկ հուշում:

Այժմ նայելով նկարներին՝անվանի՛ր հագուստի տեսակները և տեղադրի՛ր դրանք համապատասխան զգեստապահարանում:

Գարուն-գարնանային հագուստներ- գարնանային զգեստապահարան

Ամառ-ամառային հագուստներ-ամառային զգեստապահարան

Աշուն-աշնանային հագուստներ-աշնանային զգեստապահարան

Ձմեռ-ձմեռային հագուստներ - ձմեռային զգեստապահարան

Արի մի քիչ զվարճանանք. դու կարող ես այս ճամպրուկների մեջ տեղավորել հագուստի տեսակները՝ համապատասխանեցնելով դրանք տարվա եղանակների հետ: Դե, քեզ տեսնեմ:



Գարնան ճամպրուկ

Ամռան ճամպրուկ

Աշնան ճամպրուկ



Ձմռան ճամպրուկ

Այսքանը տարվա եղանակների և համապատասխան հագուստներ ընտրելու մասին: Կհանդիպենք: